

Ամերիկյան գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

Թարգմանիչ՝ Վահան Վարդանյան

«Բաթարը» պատմվածքը առաջին անգամ տպագրվել է «Կոսմոպոլիտեն մեգեզին» հանդեսում, 1902 թվականի հունիսին:

Ձեկ Լոնդոն

Բաթարը

Բաթարը իսկական դև էր: Այսպես էին ասում նրա մասին ամբողջ Հյուսիսում: Շատերը նրան «Դժոխքի ծնունդ» էին կանչում, իսկ նրա տերը՝ Սև Լեքլերը, «Բաթար» խայտառակ մականունն էր տվել, որ ֆրանսերեն նշանակում է «խառնածին»: Սև Լեքլերը նույնպես իսկական դև էր, և շունը հարմար զույգ էր նրա համար: Մի առած կա՝ երկու դև որ հանդիպեն՝ դժբախտություն կլինի: Դա անխուսափելի է: Եվ դա էլ ավելի անխուսափելի դարձավ, երբ Բաթարը ընդհարվեց Սև Լեքլերի հետ: Նրանք ծանոթացան, երբ Բաթարը մռայլ աչքերով բարայիկ ու սոված լակոտ էր, և նրանց ծանոթությունը սկսվեց կծոտումով ու մռչյունով, որովհետև Լեքլերը սովորություն ուներ գայլի պես ցցել վերին շրթունքը, բացելով սպիտակ սուր ատամները: Եվ նա շրթունքը վեր քաշեց ու կատաղորեն աչքերը փայլեցրեց, երբ ձեռքը մեկնեց ու Բաթարին դուրս քաշեց մի կույտ խտխտացող լակոտների միջից: Մարդը և շունը, ըստ երևույթին, անմիջապես ճանաչեցին իրար, որովհետև Բաթարը առանց երկար ու բարակ մտածելու իր փոքրիկ ժանիքները խրեց Լեքլերի ձեռքի մեջ, իսկ Լեքլերը երկու մատով սեղմեց նրա կոկորդը և սկսեց սառնասրտորեն խեղդել նրան, այնպես, որ քիչ մնաց շունը հրաժեշտ տար իր երիտասարդ կյանքին:

— Sacredam /Sacredam — ֆրանսիական հայիոյանք՝ անգլիականի հետ միացված:/,— փնթփնթաց ֆրանսիացին, վերքից ծորացող արյունը սրբելով ու նայելով լակոտին, որը շնչահեղձ թավալվում էր ձյան մեջ:

Լեքլերը շրջվեց դեպի Ձոն Զեմլինը՝ Վաթսուներորդ Մոդնի խանութպանը:

— Ահա թե ինչու նա ինձ դուր գալ: Զեյ, դուք, մայր, որքա՞ն ուզել նրա համար: Որքա՞ն: Ես հիմա նրան գնել, ես նրան անմիջապես գնել:

Եվ Լեքլերը լակոտին գնեց ու Բաթար ամոթալի անունը տվեց, որովհետև կատաղի ատելությամբ ասում էր նրան: Նրանք հինգ տարի շարունակ թափառեցին Հյուսիսում Վաթսուներորդ Մոդնից ու Յուքոնի դելտայից մինչև Փեյլիի վերին հոսանքները, և հասան նույնիսկ մինչև Փիզ-Ռիվեր, որը Ատաբասկու լիճն է թափվում, և մինչև Մեծ Գերոկայան լիճը: Նրանք երկուսն էլ հռչակվեցին որպես թունդ ավազակներ, և այնպիսի վատ համբավ ունեին, որպիսին դեռ չէր ունեցել ոչ մի մարդ և ոչ մի շուն:

Բաթարը իր հորը չէր ճանաչում. ահա թե ինչու այդպիսի անուն էին տվել նրան: Բայց Ձոն Զեմլինը գիտեր, որ Բաթարի հայրը անտառային մի վիթխարի գայլ էր: Բաթարը աղոտ էր հիշում իր մորը. սա կռվարար, անառակ մի քած էր՝ նենգ աչքերով, մեծ ճակատով ու լայն կրծքով, կատվի նման կենսունակ, ամեն տեսակ արարքների ու ստորությունների վարպետ: Հավատարմությունն ու նվիրվածությունը հատուկ չէին նրան: Երբեք չէր կարելի հույս դնել նրա վրա. միայն նրա նենգությունն էր, որ կասկած չէր հարուցում, իսկ վայրի անտառներում ունեցած սիրային արկածները խոսում էին նրա այլանդակված բնավորության մասին: Բաթարի ծնողները շատ արատներ ու շատ ուժ ունեին, և այդ բոլորը ժառանգել էր նա, որովհետև Բաթարը նրանց միսն ու արյունն էր: Իսկ հետո հայտնվեց Սև Լեքլերը, որը իր ծանր ձեռքը դրեց թրթռացող կյանքի այդ փոքրիկ մսակտորի վրա և սկսեց տրորել այն, սեղմել, բռնցքահարել, մինչև որ լակոտը դարձավ ամեն տեսակ խարդավանքների ընդունակ, ատելությամբ շնչող, մռայլ, սատանայի պես նենգ մի վիթխարի կատաղի շուն: Եթե Բաթարը լավ տեր ունենար, ապա կարող էր սովորական լծաշուն լինել, բայց այդպես չեղավ. Լեքլերը նրա մեջ միայն բնածին արատները զարգացրեց:

Բաթարի ու Լեքլերի պատմությունը պատերազմի, հնգամյա կատաղի պատերազմի պատմությունն է, և նրանց առաջին հանդիպումը դրա կանխագուշակ նախերգանքը եղավ: Պետք է ասել, որ այդ բոլորի մեղավորը Լեքլերն էր, որովհետև նա ատում էր գիտակցաբար ու բանականորեն, իսկ երկարատևությամբ, անճշտ լակոտը ատում էր կուրորեն, բնագործն և անհետևողականորեն: Սկզբնական շրջանում Լեքլերի դաժանությունը կատարելագործված չէր (դա հետո եղավ). ամեն ինչ սահմանափակվում էր կոպիտ վերաբերմունքով ու ծեծով: Մի անգամ, Բաթարին ծեծելիս, Լեքլերը վնասեց նրա ականջը: Մկանները կտրվեցին, ականջը կախ ընկավ լաթի նման՝ Բաթարին հիշեցնելով իր տանջահարողին: Եվ շունը ոչինչ չմոռացավ:

Նրա լակոտային պատանեկությունն անցավ անիմաստ խռովությունների նշանաբանով: Միշտ դիպչում էին Բաթարին, իսկ նա էլ պատասխան էր տալիս, քանի որ դա նրա բնավորությունն էր: Բայց նրան հնազանդեցնել հնարավոր չէր: Մտրակի ու գավազանի հարվածների տակ ցավից սուր կլանչելով, նա ամեն անգամ աշխատում էր հակահարված տալ մարտականչի մոնյունով, որի մեջ վրեժի կատաղի ծարավ էր արտահայտվում, իսկ դրա հետևանքը միշտ լինում էին նոր աքաղաղներն ու ծեծերը: Բայց նա մորից ժառանգել էր նրա համառ կենսունակությունը: Ոչ մի բան չէր հաղթում նրան: Նա դժբախտության մեջ ծաղկում էր, սոված մնալով՝ գիրանում, իսկ կյանքի համար դաժան պայքարը գերբնական հասկացողություն էր զարգացրել նրա մեջ: Նա ծածկամիտ ու խորամանկ էր, ինչպես մայրը՝ Եսկիմոսյան այդ քածը, կատաղի ու քաջ էր, ինչպես հայրը՝ գայլը:

Գուցե հենց այն պատճառով, որ նա գայլորդի էր, երբեք չէր վնաստում: Նրա՝ հաչելու լակոտային սովորությունն անցավ այնպես, ինչպես անցավ և ծռաթաթությունը, ու նա դարձավ մռայլ և ինքնամիտ: Նա հարձակվում էր արագ, առանց նախագուշացման, հայիոյանքին պատասխանում էր մռչոցով, հարվածին՝ կծոտումով, ատամները կատաղորեն բացելով արտահայտում էր իր անսահման ատելությունը, բայց երբեք, որքան էլ ծանր էր լինում նրա վիճակը, Լեքլերին չէր հաջողվում ստիպել, որ նա սարսափից կամ ցավից ոռնա: Այս անհնազանդությունը սուկ բորբոքում էր Լեքլերի կատաղությունը և նրան մղում նոր խռտանգումների:

Եթե Լեքլերը Բաթարին կես ձուկ էր տալիս, իսկ մնացած շներին՝ լրիվ, ապա Բաթարը նրանց ձուկը խլում էր: Նա գտնում էր ճանապարհորդների կողմից դադարներում թողնված սննդի պաշարները, շատ ուրիշ ստոր արարքներ էլ էր կատարում և ի վերջո դարձավ բոլոր շների և նրանց տերերի ահն ու սարսափը: Երբ մի անգամ Լեքլերը ծեծեց Բաթարին ու շոյեց Բաթեթին, որը Բաթարից կրկնակի վատ էր աշխատում, սա նրան գցեց ձյան մեջ և իր հզոր ծնոտներով այնպես փշոցեց նրա հետևի թաթը, որ Լեքլերը ստիպված եղավ շանը սպանել:

Այսպես, արյունալի կռիվների մեջ Բաթարը իրեն ենթարկեց լծվածքի իր բոլոր ընկերներին, ճանապարհ գնալու ու կերակրվելու օրերներ սահմանեց նրանց համար և ստիպեց ենթարկվել այդ օրերներին:

Հինգ տարվա ընթացքում նա միայն մի անգամ բարի խոսք լսեց, միայն մի անգամ զգաց ձեռքի փաղաքշանքը ու չհասկացավ, թե այդ ինչ էր: Նա ոստնեց վայրի գազանի պես, ինչպիսին և էր իրականում, և մի ակնթարթում նրա ծնոտները փակվեցին: Նա, որ բարի խոսք ասաց նրան ու սիրալիք շոյեց, Սանրայգի առաքելականն էր, այդ տեղերի համար մի նոր մարդ: Այս դեպքից հետո նա վեց ամիս նամակ չգրեց տանեցիներին, իսկ բժիշկը ստիպված եղավ Մաք-Քուլեսչենից սառցի վրայով երկու հարյուր մղոն անցնել՝ նրան արյան վարակումից փրկելու համար:

Երբ Բաթարը հայտնվում էր ճամբարներում և ավաններում, մարդիկ ու շները կասկածանքով զգուշանում էին: Նրան հանդիպելիս՝ մարդիկ սպառնալից ոտք էին բարձրացնում աքացի տալու համար, իսկ շները փշաքաղվում էին ու ժանիքները ցույց տալիս: Մի անգամ մի մարդ ոտքով հարվածեց Բաթարին, իսկ շունը գայլային սրընթաց ոստյունով ծնոտների մեջ առավ նրա սրնքամիսը ու կծեց մինչև ոսկորը: Մարդը հաստատապես վճռեց տեղնուտեղը վերջ տալ շանը, բայց Սև Լեքլերը մի չարագուշակ հայացք գցեց նրա վրա և որսորդական դանակը ձեռքին առաջ նետվեց բաժանելու նրանց: Սպանել Բաթարին...— ախ դու, *sacredam*,— Լեքլերն այդ հաճույքը պահում էր իր համար: Մի օր նա այդ կստանա, կամ էլ թե... Է՛, միևնույն է: Ո՛վ գիտե, թե ինչ կարող է լինել: Այսպես թե այնպես՝ հարցը կլուծվի:

Չէ որ նրանցից ամեն մեկը մյուսի համար դարձել էր հարց, որը պետք էր վճռել: Մեկի յուրաքանչյուր հոգոցը մարտահրավեր ու սպառնալիք էր մյուսի համար: Ատելությունը նրանց

այնպես էր կապել իրար հետ, ինչպես երբեք չէր կարող կապել սերը: Լեքլերը համառորեն սպասում էր այն օրվան, երբ հնազանդված Բաթարը, հաճոյաբար կլանչելով, կթավալվի իր ոտքերի մոտ: Իսկ Բաթարը... Լեքլերը գիտեր, թե ինչ է մտածում Բաթարը, և այդ բանը բազմիցս տեսել էր նրա աչքերում: Եվ նա այնքան հստակ էր տեսնում, որ միշտ, երբ Բաթարը նրա հետևում էր լինում, նա ետ էր նայում:

Մարդիկ զարմանում էին, թե ինչու Լեքլերը շանը նույնիսկ բարձր գնով ծախելուց հրաժարվում է:

— Կտեսնես, մի գեղեցիկ օր կսպանես նրան ու փողերդ էլ կկորչես,— մի անգամ ասաց Ջոն Յեմինը, երբ Լեքլերը ոտքով խփել էր Բաթարին և սա շնչահեղձ թավալվում էր ձյան մեջ, ու ոչ ոք չգիտեր՝ նրա կողերը կտորված են թե ոչ, և չէր համարձակվում մոտենալ:

— Դ-դա,— չոր-չոր ասաց Լեքլերը,— դ-դա իմ գործն է, մայր:

Մարդկանց զարմացնում էր նաև այն, թե ինչու Բաթարն իր տիրոջից չի փախչում: Նրանք ոչ մի կերպ չէին կարող այդ բանը հասկանալ: Իսկ Լեքլերը հասկանում էր: Նա շատ էր ապրել խուլ վայրերում, ուր մարդկային շունչ չէր եղել, և սովորել էր հասկանալ քամու ու փոթորկի ձայները, գիշերվա շնչառությունը, լուսաբացի շշուշոն ու օրվա աղմուկը: Նա աղոտ կերպով լսում էր, թե ինչպես են աճում բույսերը, ինչպես է հյուսվում ծորում ծառի միջով, ինչպես են պայթում բողբոջները: Եվ նա գիտեր ամեն մի կենդանու լեզուն՝ թակարդն ընկած նապաստակինը, մռայլ ագռավինը, որ օդն է ձեռքում իր թևերով, եղջերվինը, որ թափառում է լուսնի լույսի տակ, գայլինը, որ գորշ ստվերի պես սահում է աղջամուղջի ու գիշերային խավարի միջև ընկած ժամին: Եվ Բաթարը նրա հետ խոսում էր պարզ ու շիտակ: Լեքլերը շատ լավ էր հասկանում, թե ինչու Բաթարը չի փախչում իրենից, և ավելի ու ավելի հաճախ էր նայում շանը:

Կատաղության պահերին Բաթարը սակավ հաճելի տեսարան էր ներկայացնում: Նա շատ անգամ էր նետվել Լեքլերի վրա, փորձելով բռնել նրա կոկորդից, բայց միշտ էլ ընկել էր ձյան մեջ, ուշաթափված այն մտրակից, որ Լեքլերը միշտ պահում էր ձեռքին:

Այսպես Բաթարը սովորեց համբերությամբ սպասել իր ժամին: Մի անգամ, երբ նա արդեն լրիվ հասունացել էր և իր ուժերի ծաղկման մեջ էր գտնվում, նրան թվաց, թե այդ ժամը հասել է: Այն ժամանակ նա արդեն լայն կրծքով ու հզոր մկաններով խոշոր շուն էր և վիզը ծածկվել էր ցցված թավ մազերով. ճիշտ և ճիշտ ինչպես գտարյուն գայլինը: Լեքլերը մորթիների մեջ փաթաթված քնել էր, երբ Բաթարը որոշեց, որ ժամանակն է արդեն: Նա գլուխը քարշ գցած և առողջ ականջը գլխին սեղմած, սկսեց կատվի պես գողունի մոտենալ իր տիրոջը: Բաթարը շնչում էր կամաց, շատ կամաց և, գլուխը բարձրացրեց միայն այն ժամանակ, երբ ընդհուպ մոտեցել էր քնածին: Նա կանգնեց ու մի պահ նայեց, թե ինչպես բրոնզե արևայրուկով ծածկված բաց ու մկանուտ եզային վզի վրա համաչափ բաբախում է զարկերակը՝ խոր, ներդաշնակ շնչառությանը համապատասխան: Նա նայում էր ու թուրք ծորում էր նրա ժանիքներից, կաթում լեզվից, և այդ պահին նա հիշեց իր կախ ընկած ականջը, անհամար ծեծերը, անտանելի վիրավորանքներն ու անձայն նետվեց քնածի վրա:

Լեքլերը, երբ ժանիքները խրվեցին նրա վզի մեջ, ցավից արթնացավ ու գազանի պես,— և իրոք նա գազան էր,— արթնացավ և անմիջապես ամեն ինչ հասկացավ: Նա երկու ձեռքով սեղմեց Բաթարի վիզը և, մորթիները վրայից գցելով, փորձեց իր տակ ճզմել շանը: Բայց Բաթարի հազարավոր նախնիները անհամար իշայծյամների ու եղջերուների կոկորդից էին բռնել ու նրանց գետին տապալել, և նա ժառանգել էր իր նախնիների փորձը: Երբ Լեքլերը իր ամբողջ ծանրությամբ ընկավ նրա վրա, Բաթարը հետևի թաթերը ծալեց և սկսեց ճանկերով ծվատել նրա կուրծքն ու փորը, քրքրելով մաշկն ու մկանները: Իսկ հետո, զգալով, որ մարդու մարմինը ցնցվեց ու վեր բարձրացավ, էլ ավելի ամուր բռնեց նրա կոկորդից: Մյուս լծաշները ոռնոցով հավաքվեցին նրանց շուրջը, և Բաթարը, ծանր հեղուկ ու գիտակցությունը կորցնելով, հասկացավ, որ նրանք անհամբեր ուզում են ատամները խրել իր մարմնի մեջ: Բայց թե Բաթարը զբաղված էր ոչ թե նրանցով, այլ մարդով, այն մարդով, որ ընկել էր իր վրա, և Բաթարը վերջին ուժերը լարելով, բզկտում էր, ծվատում ու կրծում էր թշնամուն: Լեքլերը երկու ձեռքով խեղդում էր նրան, և ահա Բաթարի կուրծքը ջղաճգորեն բարձրացավ՝ օդ ներշնչելով, աչքերը սառեցին ու անշարժացան, ծնոտները դանդաղ բացվեցին, երախից կախվեց ուռած սև լեզուն:

— Յը, ո՞նց է: Bon /Լավ է (ֆրանս.)/: Իսկական դե,— խոխոսաց Լեքլերը, խեղդվելով բերանն ու կոկորդը լցված արյունից, և իրենից մի կողմ հրեց անզգայացած շանը:

Եվ Լեքլերը հայիոյելով վռնդեց Բաթարի վրա հարձակված շներին: Սրանք նահանջեցին, լայն շրջան կազմած պագեցին՝ պատրաստ ամեն թուպե ոստնելու, և սկսեցին դուռնները լպստել, իսկ նրանց բաշի մազերը ցցվել էին, բիզ-բիզ կանգնել:

Բաթարը արագ ուշքի եկավ և Լեքլերի ձայնը լսելով, դժվարությամբ վեր կացավ՝ հագիվիագ ոտքի վրա մնալով:

— Ը՛մ: Դև՛,— Ֆշագրեց Լեքլերը:— Ես քեզ ցույց տալ, երդվում եմ աստված, ես քեզ ուզածիդ չափ ցույց տալ:

Օրը գինու պես այրեց Բաթարի դատարկ թոքերը, և շուրջ ոստնեց, կամենալով կառչել մարդու դեմքից, բայց վրիպեց ու նրա ծնոտները փակվեցին մետաղի զևզոցով: Թշնամիները թավալվում էին ձյան վրա, և Լեքլերը բռունցքներով կատաղորեն հարվածում էր նրան: Բայց ահա նրանք անջատվեցին և սկսեցին պտտվել, անընդհատ իրար նայելով: Լեքլերը կարող էր դուրս քաշել իր դանակը: Նրա ոտքերի մոտ ընկած էր հրացանը: Բայց նրա մեջ արթնացել ու մոլեգնում էր գազանը: Դ-դա նա կանի իր սեփական ձեռքերով. . . և ատամներով: Բաթարը առաջ նետվեց, բայց Լեքլերը բռունցքի հարվածով ցած գցեց նրան, հարձակվեց նրա վրա ու մինչև ոսկորը կծեց նրա ուսը:

Նախնադարյան դրամա, նախնադարյան դեկորներով. մի տեսարան, որպիսիք, գուցե, աշխարհի վայրենի երիտասարդության ժամանակներում են խաղացվել: Բացատ՝ խուլ անտառում, բաց երախներով կիսավայրենի շների օղակ, իսկ մեջտեղում՝ երկու գազան իրար կպած, նրանք կծոտում են ու մռնչում, մոլեգնած դետուդեն ընկնում, կատաղությունից խելագարված՝ շնչահեղձ լինում, տնքում, և արյուն տենչալով՝ ճանկերով խելահեղ բզկտում իրար:

Բայց ահա Լեքլերը, դուրս պրծնելով, բռունցքով հարվածեց Բաթարի ծոծրակին, ցած գցեց նրան ու մի պահ շշմեցրեց: Հետո նա կանգնեց շան վրա և, վեր-վեր թռչելով, սկսեց կոխոտել, ասես աշխատելով գետնի մեջ խրել նրան: Նա փշրեց Բաթարի հետուի թաթերը և դրանից հետո միայն կանգ առավ՝ շունչ քաշելու:

— Ը՛ր: Ը՛ր,— անզորությամբ բռունցքը թափահարելով մռնչում էր Լեքլերը, քանի որ չէր կարող խոսել:

Բայց թե Բաթարը անհնազանդ էր: Նա անզոր թավալվում էր ձյան վրա և այնուամենայնիվ փորձում էր մռնչալ, բայց չէր կարողանում, և միայն նրա վերին շրթունքն էր թեթևակի ձգվում ու ցնցվում: Լեքլերը ոտքով խփեց նրան, իսկ շուրջ թուլացած ծնոտներով բռնեց տիրոջ կոճից, բայց նույնիսկ մաշկն էլ չկծեց:

Այն ժամանակ Լեքլերը մտրակը բարձրացրեց ու սկսեց այնպիսի կատաղությամբ խփել Բաթարին, ասես, որոշել էր կտոր-կտոր անել նրան, և մտրակի ամեն մի հարվածի հետ նա բացականչում էր.

— Այս անգամ ես քեզ փշրել: Հը՛: Երդվում եմ աստված: Ես քեզ փշրել:

Վերջապես Լեքլերը թուլացավ և, արյուն կորցնելուց գրեթե անզգայացած, փափկեց ու փլվեց իր գոհի կողքին, իսկ երբ վրեժի ծարավ շները սողալով մոտեցան նրան, նա, գիտակցության վերջին մնացորդները կորցնելով, ամբողջ մարմնով ընկավ Բաթարի վրա, որպեսզի նրան պաշտպանի շների ժանիքներից:

Դա տեղի ունեցավ Սանրայգից ոչ հեռու, և մի քանի ժամ անց առաքելականը, Լեքլերի առջև դուռը բացելով, զարմանքով նկատեց, որ Բաթարը շնալծվածքի մեջ չէ: Նա էլ ավելի զարմացավ, երբ Լեքլերը, ծածկոցը սահնակի վրայից ցած գցելով, գրկեց Բաթարին և, օրորվելով, ներս մտավ: Մաք-Քուեսչենի բժիշկը, որ խառնվածքով թափառաշրջիկ էր, այդ օրը եկել էր առաքելականի մոտ դես ու դենից խոսելու համար, և նրանք երկուսն էլ ուզեցին Լեքլերի վերքերը տեսնել:

— Merci, non /Շնորհակալություն, պետք չէ (ֆրանս.)/,— հրաժարվեց նա:— Դուք նախ շունը բուժել... Սատկե՛լ... Ոչ, չի կարելի: Ես պետք է նրան ջարդել: Ահա թե ինչու նա չպետք է սատկել:

Լեքլերը ապաքինվեց, և բժիշկն ասում էր, որ դա բացառիկ դեպք է, իսկ առաքելականը դա հրաշք անվանեց, բայց թե հիվանդության ընթացքում նա այնքան էր թուլացել, որ զարնանը տեսնող բռնվեց ու նորից անկողին ընկավ: Բաթարի վիճակը շատ վատ էր, սակայն կենսունակությունն

ամեն ինչ հաղթահարեց: Նրա հետևի թաթերի ոսկորները կպան, և այն մի քանի շաբաթում, որ նա ձգափողերով կապկաված պառկած էր հատակին, առողջացավ: Իսկ այն ժամանակ, երբ Լեքլերը ապաքինվել էր և, գունատված, ոտքերը հագիվ շարժելով, սկսեց տնից դուրս գալ արևի տակ տաքանալու համար, Բաթարն արդեն վերադարձրել էր իր իշխանությունը ազգակիցների նկատմամբ և հնազանդեցրել ոչ միայն լծվածքի իր ընկերներին, այլև առաքելականի շներին:

Նրա ոչ մի մկանը չցնցվեց, ոչ մի մազը չշարժվեց, երբ Լեքլերը, օրորվելով և առաքելականի թևին հենված, առաջին անգամ դուրս եկավ տնից ու դանդաղ, արտակարգ զգուշությամբ նստեց եռոտանի աթոռին:

— Bon,— խոսեց նա:— Bon: Լավ արև է:

Եվ նա իր նիհարած ձեռքերը երկարեց՝ վայելելով արևի ջերմությունը:

Բայց ահա Լեքլերի հայացքն ընկավ շան վրա, և նախկին կրակը վառվեց նրա աչքերում: Նա ձեռքով կպավ առաքելականի թևին:

— Mon père /Յայր իմ (ֆրանս.)/,— ա-այդ Բաթարը դև է: Ինձ համար մի ատրճանակ բերեք, որպեսզի կարողանամ հանգիստ պառկել արևի տակ:

Եվ այդ օրից Լեքլերը երկար նստում էր դռանը, արևի տակ: Նա ոչ մի անգամ աչքը չփակեց, իսկ ատրճանակը միշտ դրված էր նրա ծնկներին: Ամեն օր Բաթարը նախապես ստուգում էր, թե արդյո՞ք տեղումն է ատրճանակը: Չենքը տեսնելիս, նա թեթևակի ձգում էր շրթունքը ի նշան այն բանի, որ ինքն ամեն ինչ հասկանում է, իսկ Լեքլերը նույնպես ձգում էր շրթունքը, ի պատասխան քմծիծաղ տալով: Մի անգամ առաքելականը ուշադրություն դարձրեց այդ բանի վրա:

— Տե՛ր աստված,— ասաց նա:— Կարելի է կարծել, որ այդ շունը ամեն ինչ հասկանում է:

Լեքլերը կամացուկ ծիծաղեց.

— Տեսեք, Mon père, թե ես հիմա ինչ ասել, իսկ նա՞ լսել:

Եվ Բաթարը, ասես ի հաստատումն նրա խոսքի, հագիվ նկատելի կերպով առողջ ականջը սրեց, կարծես աշխատելով ոչ մի հնչյուն բաց չթողնել:

— Ես ասել «կսպանե՛մ»:

Բաթարը խուլ գոմռաց, բաշի մազերը ցցվեցին ու բոլոր մկանները լարվեցին սպասողական վիճակում:

— Ես ատրճանակը բարձրացնել, ահա այսպես:

Եվ Լեքլերը ատրճանակը ուղղեց Բաթարի վրա:

Բաթարը, մի կողմ նետվելով, մի ուսոյունով անցավ տան հետևը:

— Տե՛ր աստված,— կրկնեց առաքելականը:

Լեքլերը գոռոզամտորեն ծիծաղեց:

— Բայց ինչո՞ւ նա ձեզնից չի փախչում:

Լեքլերը ուներ թոթվեց. ֆրանսիացիների շատ սիրած շարժումը, որն արտահայտում է ամեն ինչ՝ սկսած լիակատար անգիտությունից մինչև խորհմաստ ըմբռնումը:

— Իսկ ինչո՞ւ դուք չեք սպանում նրան:

Լեքլերը նորից ուներ թոթվեց:

— Mon père,— մի փոքր լռելուց հետո պատասխանեց նա,— ժամանակ դեռ չի հասել: Նա դև է: Մի օր ես նրան ջարդել այսպես ու այսպես՝ կտոր-կտոր: Մի օր: Bon:

Որոշ ժամանակ անց Լեքլերը հավաքեց իր շներին և մակույկով հոսանքն ի վար գնաց մինչև Քառասուներորդ Մղոն, հետո՝ մինչև Պորթլուփայն, իսկ այնտեղ վարձվեց Խաղաղօվկիանոսյան

ափի Ընկերությունում և տարվա մեծ մասը զբաղվեց հետախուզությամբ: Այնուհետև նա Կոյուբունկով բարձրացավ մինչև բնակիչներից լքված Արկտիկ-սիթի ավանը և վերադարձավ Յուբունով, հոսանքն ի վար լողալով ճամբարից ճամբար: Եվ այդ երկար ամիսների ընթացքում Բաթարը մի դաժան դպրոց անցավ: Նա շատ տառապանքների ենթարկվեց, մասնավորապես սովի տառապանքին, ծարավի տառապանքին, կրակի տառապանքին, և ամենասարսափելիի՝ երաժշտության տառապանքին:

Ինչպես և նրա բոլոր ցեղակիցները, նա երաժշտությունը տանել չէր կարող: Երաժշտությունը խիստ տանջում էր նրան, գրգռում նրա ամեն մի նյարդը և ասես կտոր-կտոր անում նրա ամբողջ Էությունը: Երաժշտություն լսելիս շունը երկարաձիգ ոռնում էր, ինչպես պարզկա գիշերներին գայլերն են ոռնում աստղերն ի վեր: Նա չէր կարող իրեն զսպել: Լեքլերի դեմ մղած պայքարում դա նրա միակ թույլ կողմն էր, և խայտառակություն էր նրա համար: Լեքլերը, ընդհակառակը, շատ էր սիրում երաժշտությունը, այնքան շատ, որքան և գիտությունը: Եվ եթե նրա հոգին տենչում էր դրսևորել իրեն, ապա սովորաբար ընտրում էր այդ երկու ձևերից մեկը, բայց ավելի հաճախ՝ երկուսը միասին: Իսկ երբ Լեքլերը հարբած էր լինում և չերգված երգեր էին հնչում նրա ուղեղում, արթնանում էր նրա մեջ քնած դևը, և նրա հոգին իր բարձրագույն դրսևորումն էր գտնում Բաթարին տանջելու մեջ:

— Այժմ մենք մի քիչ երաժշտություն ունենալ,— ասում էր նա:— Զը՞: Ի՞նչ ես կարծում, Բաթար:

Նա միայն մի հին շրթնահարմոն էր նվագում, որը խնամքով պահում էր ու համբերատարությամբ նորոգում, բայց դա լավագույն բանն էր, որ նրան հաջողվել էր գնել, և նա դրա արծաթե փողերից կորզում էր չարագուշակ, աններդաշնակ հնչյուններ, որպիսիք ոչ ոք երբեք չէր լսել: Այդ ժամանակ Բաթարի կոկորդը սեղմվում էր և, ատամները կրճատացնելով, նա քայլ առ քայլ ետ էր գնում դեպի տնակի ամենահեռավոր անկյունը: Իսկ Լեքլերը հաստ գավազանը թևի տակ դրած, անընդհատ նվագում էր ու նվագում, քայլ առ քայլ գնալով դեպի շունը, մինչև որ սա այլևս նահանջելու տեղ չէր ունենում:

Սկզբում Բաթարը կծկվում էր, աշխատելով հնարավորին չափ քիչ տեղ զբաղեցնել, ու սեղմվում էր հատակին, բայց երաժշտությունը ավելի ու ավելի մոտիկ էր հնչում, և այդ ժամանակ նա ակամայից կանգնում էր հետևի թաթերի վրա, մեջքը սեղմած գերանե պատին, ու թափահարում էր առջևի թաթերը, ասես իրենից վանելով վրա վագող հնչյունների այիքները: Նա ատամները չէր բացում, բայց նրա մկանները սաստիկ կծկվում էին, ջղաձգումներ էին անցնում մարմնով և նա ամբողջովին դողում էր ու գալարվում համր տանջանքի մեջ: Նա այլևս չէր կարողանում իրեն տիրապետել, և նրա ծնոտները ջղաձգորեն բացվում էին, իսկ երախից այնքան թույլ կոկորդային, դողդողացող հնչյուններ էին պոկվում, որ մարդկային ականջը որսալ չէր կարող դրանք: Բաթարի ռունգները լայնանում էին, բաշի մազերը ցցվում էին և նա, աչքերը պլշած, անզոր կատաղությամբ գայլի երկարաձիգ ոռնոց էր արձակում: Այդ ոռնոցը սահուն ու սրընթաց բարձրանում էր, ուժեղանալով փոխարկվում բարձրաձայն, սրտակեղեք աղաղակի, հետո դառնությամբ հանգում: Զետո նորից վերընթաց պոռթկում, օկտավ առ օկտավ... Սիրտը ճմվում է... Եվ ահա անսահման վիշտն ու թախիծը բթանում են, մարում, աստիճանաբար իջնում և դանդաղորեն վերջ գտնում:

Դա իսկական դժոխք էր: Ու թվում էր, թե սատանայի պես ամենագետ Լեքլերը շոշափում է Բաթարի ամեն մի նյարդը, ամեն մի լարը և իր հարմոնի միալար հառաչանքներով, նրա սրտակեղեք դողդոջուն հնչյուններով շանը ստիպում է մինչև վերջին կաթիլը հեղել իր ամբողջ թախիծը: Դա սարսափելի էր, և դրանից հետո Բաթարը օրեր շարունակ չէր կարողանում ուշքի գալ, ցնցվում էր ամենասովորական հնչյուններից և ընկրկում իր սեփական ստվերից, բայց, չնայած դրան, նույն ձևով բռնակալ ու դաժան էր մյուս շների նկատմամբ: Եվ նա ոչ մի բանով տեղիք չէր տալիս մտածելու, թե իր ոգին ընկճված է: Միայն թե նա ավելի ու ավելի մռայլ ու ինքնամոխի էր դառնում և իր ժամին էր սպասում այն անհասանելի համբերությամբ, որը սկսել էր զարմացնել ու ճնշել նույնիսկ Լեքլերին: Շունը ժամերով անշարժ պառկում էր կրակի առջև, սևեռուն նայելով տիրոջը, և նրա տանջված աչքերի մեջ ատելությունն էր ամկայծում:

Հաճախ մարդուն թվացել է, թե իբր ինքը ձեռք է բարձրացրել այն բանի վրա, ինչը կյանքի Էությունն է կազմում, այն անպարտելի Էությունը, որը երկնքից ցած է բերում բազեին, ինչպես թևավոր կայծակի, որը ծանրամարմին գորշ սագին տաք երկրներից քշում է դեպի ցուրտ երկրներ, որը բեղմնավորման ժամանակ իշայծյամին ստիպում է երկու հազար մղոն սլանալ հորդացած Յուբունն ի վեր: Այդպիսի պահերին նա համակվում էր իր սեփական անպարտելի Էությունը

դրսևորելու տեսչով և, գինովությունից, վայրի երաժշտությունից ու Բաթարի նկատմամբ ասելությունից գրգռված, անձնատուր էր լինում կատաղի մոլեգնության և իր չնչին ուժն էր հակադրում աշխարհին, մարտահրավեր նետելով այն ամենին, ինչը եղել է, կա ու կլինի:

Այստեղ ինչ-որ մի բան կա,— ասում էր նա, երբ երաժշտության հնչյունների մեջ արտահայտվող նրա հոգու խելագարությունները դիպչում էին Բաթարի Էոլթյան գաղտնի լարերին, ստիպելով, որ շունը երկարաձիգ ու մռայլ ոռնա:— Ես դ-դա դուրս քաշել երկու ձեռքով, ահա այսպես ու այսպես: Հա: Հա: Դ-դա ծիծաղելի է: Դ-դա շատ ծիծաղելի: Քահանան սաղմոսներ երգել, կանայք աղոթել, տղամարդիկ հայիոյել, ճնճողկները «ծիվ-ծիվ» անել: Բաթարը, նա ո՛ւր ո՛ւր անել, և այդ-դ բոլորը նույն բանն է: Հա: Հա:

Հայր Գոթյեն, մի արժանավոր քահանա, մի անգամ սկսեց խրատել Լեքլերին, նրան սպառնալով դժոխքի անխուսափելի պատժով: Եվ այդ պահից էլ նա երդվեց չկրկնել:

— Դ-դա, գուցե և այդպես է, Mon père,— առարկեց Լեքլերը:— Իսկ ես կարծել, ես անցնել դժոխքի միջով և այնտեղ ասամ ճոճտացնել բոլորի վրա, ինչպես չոր ճյուղեր ճոճտալ կրակի մեջ: Ճի՞շտ է:

Բայց ամեն մի վատ բան վերջանում է այնպես, ինչպես և ամեն մի լավ բան: Սև Լեքլերի վերջը ևս եկավ: Ամռանը նա Մաք-Դուգալից ծանծաղուտով հասավ Սանրայգ: Նա Մաք-Դուգալից դուրս եկավ Թիմոտի Բրաունի հետ, իսկ Սանրայգ եկավ մենակ: Հայտնի դարձավ, որ նրանք, ափից հեռանալուց առաջ, կռվել են: Տասը տոնանոց «Լիզգի» անիվավոր շոգենավը, որը մի օր ուշ էր դուրս եկել, Լեքլերից երեք օր առաջ տեղ հասավ: Իսկ Լեքլերը Սանրայգ եկավ ուսը գնդակով ծակված և մի այնպիսի պատմություն արեց, որտեղ ամեն ինչ կար՝ և դարանակալություն, և կրակոցներ, և՛ սպանություն:

Սանրայգում ոսկի էին գտել և այնտեղ շատ բան էր փոխվել: Այնտեղ էին հորդել ոսկի որոնող հարյուրավոր մարդիկ, վիսկիի հեղեղներ, պրոֆեսիոնալ խաղամոլներ, և առաքելականը տեսավ, որ իր կյանքի այն էջը, որը հնդկացիներին դարձի բերելուն է նվիրված, մաքուր ջնջված էր: Երբ հնդկուհիները սկսեցին միայնակ ոսկեխույզների համար բակլա եփել ու վառարան վառել, իսկ հնդիկները՝ իրենց տաք մորթիները սև շշերի ու ջարդված ժամացույցների հետ փոխել, առաքելականը անկողին ընկավ, մի քանի անգամ «Տե՛ր աստված» ասաց և կոշտ ու կոպիտ սարքված երկար արկղի մեջ մեկնեց այնտեղ, որտեղ նա պետք է իր վերջին գեկույցը ներկայացներ: Դրանից հետո պտուտախաղ և փարավոն խաղացողները սեղանները փոխադրեցին առաքելության տունը, և զառերի չրխկոցն ու բաժակների զնգոցն էր լսվում այնտեղ վաղ լուսաբացից մինչև երեկո և երեկոյից մինչև առավոտ:

Պետք է ասել, որ Թիմոտի Բրաունը հանրաճանաչ էր հյուսիսի արկած որոնողների շրջանում: Միայն մի բանում կարելի էր նրան կշտամբել. նա դյուրաբորբոք էր ու կռվարար. բայց այդ մանր թերությունների դիմաց նա բարի էր և առատաձեռն: Սակայն ոչ մի բան չէր քավում Սև Լեքլերի մեղքերը: Նա իսկապես «սև» էր, մի բան, որի մասին վկայում էին մարդկանց հիշողությունից չջնջվող նրա արարքները: Եվ բոլորն էլ նույնքան ուժգին ասում էին Լեքլերին, որքան սիրում էին Թիմոտի Բրաունին: Այդ պատճառով էլ Սանրայգի բնակիչները հականեխիչ վիրակապ դրեցին Լեքլերի ուսին ու Լինչի դատաստանի քարշ տվեցին նրան:

Նրանց համար ամեն ինչ պարզ էր: Լեքլերը Մաք-Դուգալում կռվել էր Թիմոտի Բրաունի հետ: Նա Մաք-Դուգալից դուրս էր եկել Թիմոտի Բրաունի հետ միասին: Սանրայգ էր եկել առանց Թիմոտի Բրաունի: Լավ իմանալով, թե Լեքլերը ինչ պտուղն է, բոլորը այն եզրակացությանը հանգեցին, որ նա սպանել է Թիմոտի Բրաունին: Լեքլերն իր կողմից հաստատում էր իր դատավորների բերած փաստերը, բայց հերքում էր դրանցից արված եզրակացությունները և ամեն ինչ յուրովի բացատրում:

Սանրայգից քսան մղոն հեռավորության վրա նրանք լողում էին նավակով, այն առաջ մղելով դարձածողաններով: Նավակն ընթանում էր ժայռապատ ափի երկարությամբ: Հանկարծ երկու կրակոց լավեց: Թիմոտի Բրաունը նավակից ջուրն ընկավ ու սուզվեց, կարմիր պղպաջակներ բաց թողնելով: Այսպես զոհվեց Թիմոտի Բրաունը: Լեքլերը, ուսի մեջ սուր ցավ զգալով, փռվեց նավակի հատակին: Նա պառկել էր անշարժ, աչքերը ափին հառած: Մի փոքր անց, երկու հնդկացիները գլուխները դուրս հանեցին թաքստոցից և ափ ելան՝ կեչու կեղևից մի մակույկ շալակած: Երբ նրանք մակույկը ջուրն էին իջեցնում, Լեքլերը կրակեց: Նա խփեց հնդկացիներից մեկին և սա Թիմոտի Բրաունի նման ջուրն ընկավ: Մյուսը փռվեց մակույկի մեջ, այնուհետև մակույկն ու

Նավակը քշվեցին հոսանքն ի վար, միմյանցից առաջ ընկնելով: Շուտով նրանք մոտեցան այն տեղին, որտեղ գետը երկու բազուկի էր բաժանվում. մակույկը կղզին շրջանցեց մի կողմից, իսկ նավակը՝ մյուս կողմից: Լեքերն այլևս մակույկ չտեսավ, նա Սանրայգ եկավ մենակ: Այո, դատելով ըստ այն բանի, թե ինչպես էր հնդկացին վեր թռել մակույկի մեջ, նա՝ Լեքերը, անկասկած խփել էր նրան: Ահա և բոլորը:

Այս ցուցմունքին չհավատացին: Լեքերին տասը ժամ ժամանակ տվեցին, իսկ «Լիզզին» հոսանքով ներքև ուղարկեցին որոնումներ կատարելու: Տասը ժամ հետո «Լիզզին» հեծին Սանրայգ վերադարձավ: Ոչինչ չէր հաջողվել իմանալ: Լեքերի ցուցմունքները չհաստատվեցին: Նրան խորհուրդ տվեցին կտակ գրել, քանի որ նա հիսուն հազար դոլարի ոսկու հանք ուներ Սանրայգում, իսկ այստեղի մարդիկ ոչ միայն իրենք էին օրենքները հաստատում, այլև պահպանում էին դրանք:

Լեքերը ուներ վեր քաշեց:

— Ահա թե ինչ,— ասաց նա,— մի փոքրիկ... ինչպես դուք ասել... ողորմածություն... այո է որ կա, մի փոքրիկ ողորմածություն... Ես իմ հիսուն հազար դոլարը տալ եկեղեցուն, ես իմ Եսկիմոսական շուն Բաթարը տալ սատանային: Մի փոքրիկ ողորմածություն: Դուք նախ և առաջ կախել նրան, իսկ հետո կախել ինձ: Այդ-դ լավ է, այո՞:

Լավ, համաձայնեցին նրանք, թող «դժոխքի ծնունդը» իր տիրոջ համար ճանապարհ բացի վերջին լեռնանցքում: Դատարանի նիստը փոխադրեցին գետափ, որտեղ մի մեծ եղևնի էր կանգնած: Ալարկոտ Չարլին մի օղակ սարքեց հաստ պարանի ծայրին, զցեց Լեքերի վիզը ու ձգեց: Հետո Լեքերի ձեռքերը կապեցին մեջքին և օգնեցին, որ պաքսիմատների արկղի վրա կանգնի: Պարանի ազատ ծայրը զցեցին ծառի ոստի վրայով, ձգեցին ու հանգուցեցին: Մտում էր միայն արկղը հրել ոտքերի տակից, որպեսզի մարմինը օրորվեր օդում:

— Իսկ հիմա շանը,— ասաց նախկին լեռնային ինժեներ Ուեբստեր Շոուն:— Նրան դու ես կախելու, Ալարկոտ:

Լեքերը ատամները բացեց: Ալարկոտը մի կտոր ծամելու ծխախոտ կծեց, սահող օղակ սարքեց և սկսեց պարանը դանդաղորեն փաթաթել թևին: Նա մեկ թե երկու անգամ ընդհատեց այդ գործը, որպեսզի դեմքից փախցնի համառորեն վրա տվող մոծակներին: Բոլորը մոծակներին էին քշում, բացի Լեքերից. նրա գլխավերևում ևս փոքրիկ ամպի պես խռնվել էին մոծակները: Նույնիսկ Բաթարը, որը փռվել էր գետնին, առջևի թաթերով մոծակներին քշում էր աչքերից ու դնչից:

Բայց մինչ Ալարկոտը սպասում էր, թե երբ Բաթարը գլուխը կբարձրացնի, մի հեռավոր ճիչ խախտեց լռությունը, ու բոլորը տեսան, որ ինչ-որ մեկը դուրս վազեց Սանրայգից և թևերը թափահարելով սլանում է հարթավայրով: Դա խանութպանն էր:

— Տղերք, սպասեցեք,— հեռապառ ասաց նա և, շունչ քաշելով, սկսեց.— Հենց նոր հայտնվեցին Փոքրիկ Սենդին և Բերնարդոտը: Նրանք ասի են իջել ներքևում և ոտքով ուղիղ այստեղ եկել: Իրենց հետ բերել են Բոբրին: Նրան բռնել են մակույկի մեջ, հեռավոր վտակում, Բոբրի վրա գնդակի երկու վերք կա: Մյուսը Կոկ-Քատսն է եղել, նա, որ խեղանդամ է դարձրել իր սքվոյին ու փախել:

— Ինչպե՞ս: Իսկ ես ի՞նչ ասել:— Ինչպե՞ս,— ցնծությամբ բացականչեց Լեքերը:— Այդ-դ նա է: Ես գիտեմ, որ ես ճիշտ խոսել:

— Լսեցեք. մենք պետք է մի լավ դաս տանք այդ անիծյալ սիվաշներին,— խոսեց Ուեբստեր Շոուն:— Նրանք գիրացել են ու լկտիացել, և մենք հարկադրված ենք լռեցնել նրանց: Ապա մի հավաքեցեք բոլոր հնդկացիներին և կախեցեք Բոբրին, որ օրինակ լինի: Ահա թե ինչպիսին կլինի մեր ծրագիրը: Չնանք լսենք, թե նա ինչ կարող է ասել իրեն պաշտպանելու համար:

— Հե՛յ, մայո,— ձայն տվեց Լեքերը, երբ բազմությունը Սանրայգ հորդեց ու սկսեց աչքից կորչել մթնշաղի մեջ:— Ես նույնպես շատ ուզել տեսնել ներկայացումը:

— Մենք քեզ կարձակենք այն ժամանակ, երբ կվերադառնանք,— ետ նայելով ասաց Ուեբստեր Շոուն:— Իսկ առայժմ խորհիր քո մեղքերի և նախախնամության ուղիների մասին: Դա քեզ համար օգտակար կլինի, մեզնից շնորհակալ կլինես:

Ինչպես և առողջ նյարդերով բոլոր մարդիկ, որոնք վարժվել են վտանգներին ու սովորել են համբերել, Լեքլերը պատրաստվեց երկար սպասելու, այլ կերպ ասած, հաշտվեց այդ մտքի հետ: Բայց թե նրա մարմինը չէր կարող հաշտվել անհարմար դրության հետ. պարանը Լեքլերին ստիպում էր ձգված կանգնել: Բավական էր մի փոքր թուլացներ ոտքերի մկանները, և կոշտ պարանը խրվում էր նրա վզի մեջ. իսկ եթե նա շտկվում էր՝ ուսն էր խիստ ցավում: Նա կախ գցեց ստորին շրթունքը և սկսեց փչել վերև, աշխատելով մոծակներին փախցնել աչքերից: Բայց նույնիսկ այս տհաճ դրության մեջ էլ մխիթարվելու բան կար. չէ որ արժեք մի փոքր համբերել, երբ հաջողվել էր մահվան ճանկերից դուրս պրծնել: Իհարկե, ափսոս, որ չի կարողանա տեսնել, թե ինչպես են կախելու Բոբրին:

Այսպես խորհում էր նա, մինչև որ նրա հայացքը ընկավ Բաթարի վրա, որը գետնին փռված ու գլուխը առջևի թաթերին դրած, ննջում էր: Եվ այդ ժամանակ մտածումները վերջացան: Լեքլերն սկսեց ուշադիր նայել շանը, աշխատելով հասկանալ՝ իրոք նա քնած է, թե սոսկ քնած է ձևանում: Բաթարի կողերը հավասարաչափ վերվար էին անում, բայց Լեքլերը հոտառությամբ կռահում էր, որ նա մի փոքր ավելի արագ է շնչում, քան սովորաբար շնչում է քնած ժամանակ, և որ նրա մեջ ամեն ինչ, մինչև վերջին մագը, լարված է, ինչպես հնարավոր չէ լարվել քնած վիճակում, որը միշտ թուլացնում է մարմինը: Լեքլերը հաճույքով Սանրայզի իր ոսկու հանքը կտար, միայն թե հաստատապես իմանար, որ շունն իրոք քնած է, ու երբ պատահականորեն նրա հողերը ճոճտացին, նա արագորեն ու մեղավոր հայացքով նայեց Բաթարին, սպասելով, որ սա վեր կթռչի: Այդ պահին Բաթարը չշարժվեց, բայց մի քանի րոպե անց, նա վեր կացավ, դանդաղ ու ծուլորեն ձգվեց և ուշադիր շուրջը նայեց:

— Sacredam,— ատամների արանքից նետեց Լեքլերը:

Համոզվելով, որ մոտերքում ոչ ոք չկա, Բաթարը նստեց, վերին շրթունքը ծռմռեց,— թվում էր, թե նա ժպտում է,— վեր նայեց Լեքլերին ու սկսեց թաթերը լիզել:

— Ես իմ վերջը տեսնել,— խոսեց մարդը և սպանիչ ծիծաղով հռհռաց:

Բաթարը մոտ գնաց: Նրա հաշմված ականջը կախ էր ընկած, առողջը լարի պես ձգվել էր: Գլուխը անվայելուչ կերպով մի կողմի վրա թեքած, նա սկսեց մոտենալ մանրիկ, պարող քայլերով: Հետո կամացուկ քսվեց արկղին, և սա տեղից շարժվեց: Լեքլերը զգուշորեն մերթ մեկ, մերթ մյուս ոտքին էր հենվում, աշխատելով պահպանել հավասարակշռությունը:

— Բաթար,— խոսեց նա հանգիստ ձայնով,— հեռացիր: Ես քեզ կսպանեմ:

Ծանոթ բառերը լսելով, Բաթարը մռնչաց և էլ ավելի ուժեղ հրեց արկղը: Հետո նա կանգնեց հետևի թաթերի վրա, իսկ առջևի թաթերով ուժեղ հենվեց արկղի վերին մասին: Լեքլերն ուզում էր ոտքով խփել նրան, բայց պարանն այնպես խրվեց նրա վզի մեջ, որ նա քիչ մնաց հավասարակշռությունը կորցնելու:

— Հեյ, հեյ: Կորիր: Առա՛ջ,— գոռաց նա:

Բաթարը մի քանի ոտնաչափ ետ գնաց սատանայական այնպիսի խորամանկ տեսքով, որ Լեքլերն այլևս չէր կարող սխալվել նրա մտադրության մեջ: Նա հիշեց, թե ինչպես էր շունը շատ անգամ սառցանցքի կեղևը կտորել՝ վեր թռչելով ու ամբողջ մարմնով նրա վրա ընկնելով, և հասկացավ, թե նա ինչ է մտածում: Բաթարը ետ շրջվեց ու քարացավ: Նա բացեց իր սպիտակ ատամները (ի պատասխան՝ Լեքլերը նույնպես ատամները բացեց), հետո ոստնեց և իր ամբողջ ծանրությամբ փլվեց արկղի վրա:

Զառոդ ժամ անց Ալարկոտ Չարլին և Ուեբստեր Շոուն, վերադառնալով, մթնշաղի մեջ օրորվող մի սարսափելի ճոճանակ նկատեցին: Մոտ վազելով, տեսան մի մեռած մարդու մարմին և նրանից կառչած մի կենդանի Էակ, որը ցնցում էր նրան, թափահարում, օրորում:

— Հեյ-հեյ: Կորիր, դժոխքի ծնունդ,— գոռաց Ուեբստեր Շոուն:

Բաթարը միայն կատաղությամբ աչքերը փայլեցրեց նրա վրա, սպառնալից մռնչաց, բայց ծնոտները չբացեց:

Ալարկոտ Չարլին դուրս քաշեց ատրճանակը, բայց նրա ձեռքերը, ասես ցրտից, դողդողում էին, և նա չհամարձակվեց կրակել:

— Դու վերցրու,— ասաց նա, ատրճանակը մեկնելով ընկերոջը:

Ուեբստեր Շոուն կարճ ծիծաղեց, նշան բռնեց շան ճակատին՝ վառվող աչքերի մեջտեղը, և ձգանը քաշեց: Բաթարի մարմինը ցնցվեց, ջղաձգորեն խփվեց գետնին ու միանգամից թուլացավ: Բայց նրա սեղմված ծնոտները այնպես էլ փակ մնացին: